ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04/25

ք. Բյուրեղավան 16 մայիսի 2025թ.

2025 թվականի մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի Մշակույթի տան փոքր դահլիճում (հասցեն՝ քաղաք Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց), կայացավ «ԿՈՒՊՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած՝ երկրորդային հումքային նյութերից պղնձի ձուլման վերաբերյալ հանրային քննարկումները (1-ին փուլ):

Մասնակցում էին՝

«ԿՈՒՊՐՈՒՄ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Արայիկ Ծատուրյանը, Բյուրեղավան քաղաքի բնակիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Օրակարգում

«ԿՈՒՊՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած՝ երկրորդային հումքային նյութերից պղնձի ձուլման վերաբերյալ հանրային քննարկումներ (1-ին փուլ):

Լսեցին՝

Բացման խոսքով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ղազարյանը: Նա նշեց, որ «ԿՈՒՊՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերությունը դիմել է համայնքապետարան օրենքով սահմանված կարգով հանրային քննարկում իրականացնելու համար:

Այնուհետև հանդես եկավ «ԿՈՒՊՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ Արայիկ Ծատուրյանը, ներկայացրեց նախատեսվող գործունեությունը, վառարանի աշխատանքային հզորությունը, աշխատանքի և ֆիլտրման համակարգերը, նախատեսվող աշխատատեղերի մասին տեղեկատվություն:

Հանրային լսման ներկաները (ցանկը կցվում է) միաձայն դեմ քվեարկեցին «ԿՈՒՊՐՈՒՄ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացրած՝ երկրորդային հումքային նյութերից պղնձի ձուլման գործունեության իրականացմանը Բյուրեղավան քաղաքում:

Քննարկումների պատասխանատու՝
Բյուրեղավանի համայնքապետարանի
աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Ս. Ղազարյան